



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, գ. Մասիս, e-mail: masisg.ararat@mta.gov.am հեռ. 023560011

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**10 սեպտեմբերի 2018 թվականի N 12 Ա**

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝

Ավագանին որոշում է՝

Հաստատել Մասիս համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 06 նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման թույլտվություն տալու մասին / Ձեկ.Ե.Գալստյանր /
2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 20, 21-Ն որոշումների մեջ լրացում կատարելու մասին / Ձեկ.Ե.Գալստյանր /
3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2018 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին / Ձեկ.Ե.Գալստյանր /

Կողմ - 6, ձեռնպահ - 0, դեմ - 0

Գ.Գալստյան

Գ.Մելքոնյան

Մ.Արզումանյան

Լ.Հակոբյան

Գ.Դավթյան

Ն.Մխիթարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ե.ԳԱԼՍՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, գ. Մասիս, e-mail: masisg.ararat@mta.gov.am հեռ. 023560011

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 սեպտեմբերի 2018 թվականի N 13-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

- Թույլատրել համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի կարգով օտարել Մասիս համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը.  
03-057-0210-0001 կադաստրային ծածկագրի տակ հաշվառված գյուղատնտեսական գործառնական նշանակության 0,4505 հա հողամասը  
03-057-0009-0029 կադաստրային ծածկագրի տակ հաշվառված բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,09454 հա հողամասը
- Օտարվող հողամասերի մեկնարկային գները սահմանել նրանց կադաստրային արժեքի 100%-ի չափով:

Կողմ - 6, ձեռնպահ - 0, դեմ - 0

Գ. Գալստյան

Գ. Մելքոնյան

Մ. Արզումանյան

Լ. Հակոբյան

Գ. Դավթյան

Ն. Մխիթարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ե. ԳԱԼՍՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, գ. Մասիս, e-mail: masisg.ararat@mta.gov.am hbn.023560011

ՈՐՈՇՈՒՄ

10 սեպտեմբերի 2018 թվականի N 14-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13 -Ի ԹԻՎ 20, 21-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասով և "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Տարածքային և զարգացման նախարարի հանձնարարականը, գյուղատնտեսության նախարարի գրությունը, ՀՀ Արարատի մարզպետի 28.03.2018թ N1/7/1767-18 գրությունը .

Ավագանին որոշում է

1. Մասիս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի « Մասիս համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 21-Ն որոշման հավելվածում կատարել լրացում նոր տողով՝ <<Անասնաբույժ>> հաստիք, հաստիքային միավոր <<0.5>>, պաշտոնային դրույքաչափ <<36.5>> հազ. դրամ

2. Համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին՝ 2017 թվականի դեկտեմբերի 13 -ի թիվ 20 -Ն որոշմամ 2-րդ մասում՝ կատարել հետևյալ լրացումը՝ ավելացնել 9 - րդ կետ և այն շարադրել՝

9) Համայնքում կանխարգելիչ միջոցառման ժամանակ անասնաբույժի ծառայությունից օգտվելու վճար սահմանել

- Մեկ խոշոր եղջերավոր անասուն -200/երկու հարյուր/ ՀՀ դրամ
- Խոզամայր-200 /երկու հարյուր/ ՀՀ դրամ
- Խոճկոր-100/ մեկ հարյուր/ ՀՀ դրամ
- Մանր եղջերավոր անասուն-100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ
- Թռչուն-50 /հիսուն/ ՀՀ դրամ

Կողմ - 6, ձեռնպահ -0, դեմ -0

Գ.Գալստյան

Գ.Մելքոնյան

Մ.Արզումանյան

Լ.Հակոբյան


Գ.Դավթյան

Ն.Մխիթարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ե.ԳԱԼՍՏՅԱՆ





Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, գ. Մասիս, 023560011, e-mail: masig.ararat@mta.gov.am  
Հեռ: 023560011

**ՈՐՈՇՈՒՄ**

10 սեպտեմբերի 2018 թվականի N 15 -Ն

**ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է

Մասիս համայնքի 2018 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. 11.01.02.51/Համայնքների պահուստային ֆոնդի/ 4891 հոդվածից 122.000 / հարյուր քսաներկու հազար/դրամ տեղափոխել 04.05.01.59 /Փողոցների պահպանում և շահագործում/4269 հոդվածին:

Կողմ - 6, ձեռնպահ - 0, դեմ - 0

Գ.Գալստյան

Գ.Մելքոնյան

Ս.Արզումանյան

Լ.Հակոբյան

Գ.Դավթյան

Ն.Մխիթարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ե.ԳԱԼՍՅԱՆ

